

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում
2 դեկտեմբերի 2008թ.

Կենտրոնական բանկի նախագահ

----- Արթուր Զավառյան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԴՐԱՆՑ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Երևան 2008թ.

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն ընթացակարգը սահմանում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կանոններում և/կամ կանոնակարգերում (այսուհետ՝ Կարգեր) փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու, ինչպես նաև դրանց բողոքարկման ընթացակարգերը:

1.2.Հասկացությունները

Սույն ընթացակարգերում կիրառվող հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Դեպոզիտարիայի Կարգերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու հիմքերը.

2.1. Դեպոզիտարիայի Կարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն կարող է առաջանալ.

2.1.1. ՀՀ օրենսդրության փոփոխությունների հետևանքով.

2.1.2. ՀՀ կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշում ընդունվելու դեպքում.

2.1.3. Դեպոզիտարիայի կառավարման մարմինների նախաձեռնությամբ.

2.1.4. Դեպոզիտարիայի աշխատակիցների կողմից արված առաջարկությունների հիման վրա, եթե այդ առաջարկությունները հավանության են արժանանում տվյալ աշխատակիցի ստորաբաժանման դեկավարի և Դեպոզիտարիայի տնօրենի (այսուհետ՝ Տնօրեն) կողմից:

Գլուխ 3. Դեպոզիտարիայի Կարգերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու ընթացակարգը.

3.1. Սույն ընթացակարգի 2-րդ գլխով նախատեսված հիմքերն առաջանալու դեպքում Տնօրենի կարգադրությամբ Դեպոզիտարիայի համապատասխան աշխատակիցը (այսուհետ՝ Աշխատակից) մշակում է համապատասխան Կարգի փոփոխությունների և լրացումների նախագծերը:

3.2. Կարգի փոփոխությունների և լրացումների նախագիծը կազմելուց և իրավախորհրդատուի հետ համաձայնեցնելուց հետո Աշխատակիցը այն ներկայացնում է Տնօրենին: Տնօրենը ստուգում է կազմված Կարգի փոփոխության նախագծի ճշգրտությունը և արժանահավաքատությունը՝ անհրաժեշտության դեպքում կարգադրելով ուղղումներ կատարել ներկայացված Կարգի նախագծում:

3.3. Աշխատակիցի կողմից կազմված այն Կարգի նախագծի վերջնական տարրերակը, որը նշանակա է գրանցման ՀՀ կենտրոնական բանկում Տնօրենը ներկայացնում է Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահին:

3.4. Կարգի նախագիծը նախքան Խորհրդին ներկայացնելը, Տնօրենը պարտավոր է շահագրգիռ անձանց հնարավորություն ընձեռել ներկայացնելու հաստատման ենթակա կանոնների և կանոնակարգերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ և փաստարկներ:

3.5. 3.4. կետով սահմանված պահանջը իրականացնելու նպատակով, Տնօրենի կարգադրությամբ, Կարգի նախագիծը տեղադրվում է Դեպոզիտարիայի ինտերնետ կայքում՝ Խորհրդի նիստի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ:

3.6. Ծահագրիու անձինք Կարգի նախագիծի վերաբերյալ իրենց առաջարկությունները, դիտողությունները և փաստարկները պետք է Դեպոզիտարիա ներկայացնեն Կարգի նախագիծը Դեպոզիտարիայի ինտերնետ կայքում տեղադրվելու օրվանից 10 օրվա ընթացքում՝ ֆարսիմիլային կապի, Էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն:

3.7. Ծահագրիու անձանց կողմից ուղարկված առաջարկությունները, դիտողությունները և փաստարկները քննարկվում են Խորհրդի նիստի ընթացքում և դրանց նպատակահարմարության, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու դեպքում Խորհրդի որոշմամբ դրանք ներառվում են Կարգի մեջ:

3.8. Խորհրդի կողմից ՀՀ կենտրոնական բանկում գրանցման ենթակա Կարգի փոփոխությունները և/կամ լրացումները հաստատելուց հետո Օրենքով սահմանված կարգով դրանք պետք է ներկայացվեն ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանը:

3.9. 3.8. կետով սահմանված Կարգի փոփոխությունները և/կամ լրացումները ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելու օրվանից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում պետք է հրապարակվեն Դեպոզիտարիայի ինտերնետ կայքում:

Գլուխ 4. Դեպոզիտարիայի Կարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ բողոքարկման կարգը

4.1. Դեպոզիտարիայի Կարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ կարող են բողոքարկել.

4.1.1. շահագրիու անձինք.

4.1.2. Դեպոզիտարիայի աշխատակիցը, եթե Կարգում կատարված փոփոխությունը և/կամ լրացումը կարող է հանգեցնել տվյալ աշխատակիցի աշխատանքի անհնարինությանը կամ անտեղի բարդեցմանը:

4.2. 4.1. կետում նշված անձինք Կարգերի հաստատված փոփոխությունները և/կամ լրացումները կարող են բողոքարկել դրանք Դեպոզիտարիայի կայքում հրապարակվելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Կարգի բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը:

4.3. Բողոքարկումը պետք է ներկայացվի գրավոր ձևով Տնօրենին: Բողոքարկման մեջ հստակ պետք է նշվի, թե Կարգով բողոքարկող անձի ինչ իրավունք է խախտվում:

4.4. Խորհրդի կողմից ընդունված Կարգերի կապակցությամբ ստացված բողոքները բողոքարկման ժամկետի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են Խորհրդի նախագահին, որն էլ դրանք ներկայացնում է Խորհրդի նիստի քննարկմանը:

4.5. Խորհրդի բողոքարկման բավարարման դեպքում բողոքարկված Կարգում կատարվում են փոփոխություններ սույն ընթացակարգի 3-րդ գլխում սահմանված կարգով:

Գլուխ 5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն ընթացակարգը հաստատվում է Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո:

5.2. Սույն ընթացակարգի փոփոխությունները և/կամ լրացումները հաստատվում են Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո:

Հաստատված է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ
Դիտորդ խորհրդի 13.06.2008թ.
թիվ 3 որոշմամբ

Յոհան Ֆրեդիկը